

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԳՐԱՆՍԻՄՈՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԱՍՍՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՑՈՒՄ

Ա. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պատմական անցյալով հարուստ և հերոսական սխրագործություններով փառաբանված Սասունը XIX դարի վերջին թուրքական վարչական բաժանումով մտնում էր Բիթլիսի վիլայեթի մեջ և կազմում Մուշի սանջակի կազաններից մեկը: Իր աշխարհագրական դիրքով այն տրոհվում էր լեռնային կամ կենտրոնական և դաշտային կամ ծայրամասային շրջանների: Լեռնային Սասունն իր մեջ ներառում էր յոթ գավառներ՝ Օստախ, Ծովասար, Տալվորիկ, Գավառ, Փսանջ, Խիանջ և Խուլփ, որոնք իրենց հերթին բաժանվում էին, ինչպես ընդունված էր անվանել, «մայր ու որդի» գյուղերի: Գրեթե այդպիսի բաժանման էր ենթարկված նաև Դաշտային Սասունը: Ի տարբերություն Դաշտային Սասունի, որտեղ մահմեդական, հատկապես քրդական բնակչության թիվը զգալի էր, Լեռնային Սասունում այն գրեթե աննշան էր: XIX-XX դարերի սահմանազրկից վերոհիշյալ յոթ գավառներում հաշվվում էր 1.924 տնտեսություն, որոնցից 1.769-ը հայկական էին, իսկ 155-ը՝ քրդական: Լեռնային Սասունի բնակչության թիվը նշված ժամանակաշրջանում հասնում էր 12 հազարի¹:

Սասունի բնական պայմանները հնարավորություն էին տալիս բնակիչներին տևապես պահպանելու իրենց կիսանկախ վիճակը: Սակայն սուլթանական կառավարությունը, վարելով հայաջիգ քաղաքականություն, պատե՛հ առիթով զորք էր ուղարկում Սասուն և կատարում իր սև գործը: «Սասունն առանց հայերի»: Սա էր «փառիշահական» ծրագիրը՝ մշակված Պոլսի պետական ատյաններում ուղարկված փաշաներին գործադրության համար: Դեռ 1903 թ. կեսերից, երբ աստիճանաբար ակնհայտ էր դառնում սուլթանի դժոխային մտադրությունը, դարձյալ հայ իրականության մեջ գտնվեցին մարդիկ, որոնք փորձում էին գրիչով և լուրերով հանգստացնել և հավատացնել, որ եվրոպական պատժի հեռանկարի դիմաց «կարմիր սուլթանը» չի հանդգնի անել այդ քայլը, չի համարձակվի այդ աստիճան ըմբոստանալ տարրական արդարության պահանջների դեմ: Բայց հետագա իրադարձությունները հերքեցին դրանք: Սուլթան Աբդուլ Համիդը չափազանց լավ էր ուսումնասիրել եվրոպական քաղաքակրթության շահասեր պատտառը, որպեսզի որևէ լուրջ նշանակություն տար դիվանագիտական զանազան կիսաբերան դիմումներին և առաջարկություններին: Նա լավ գիտեր, որ մինչև պետական շահեր չունենային, այդ դելկասները, զոլուխովսկիները և սուլթերիները երբեք խոսքից գործի չէին անցնի: Ակնհայտ էր, որ Թուրքիան, օգտվելով ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով մեծ պետությունների միջև առկա լարված հարաբերություններից, փորձում էր վերսկսել հայ ազգի բնաջնջման ընդհատված գործը:

1904 թ. ձմռանը թուրքական իշխանություններն ուժեղացրին Սասունի հայ ազգաբնակչության ճնշումները: Իրենց գործողությունները հիմնավորելու համար իշխանությունը պարբերաբար լուրեր էր տարածում, թե Մուշի շրջանի հայերը վաճառում են իրենց ունեցվածքը՝ զենքեր գնելու համար: Մուշ գործուղվեց ոստիկանական մի խումբ՝ լուրերը ստուգելու համար: Չնայած նրան չհաջողվեց հայերի զինվելու վերաբերյալ ա-

¹ Տե՛ս Ա. Ս. Լաճաբաբյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Եր., 1999, էջ 206:

² Տե՛ս նույն տեղը, էջ 206:

³ Տե՛ս Մ. Գ. Мерсесян, Геноцид армян в османской империи, Ер., 1966, էջ 168:

պացուցներ գտնել, բայց դա ամենևին չխանգարեց հաստատելու տարածված լուրերի «իսկությունը»։ Այս հանգամանքն ավելի վատթարացրեց տեղի մահմեդական բնակչության հարաբերությունները հայերի հետ։ Մուշի իշխանությունները պարբերաբար դիմում էին Կ.Պոլիս և խնդրում թուլտվություն՝ անկարգություններին վերջ տալու համար։ Թուլտվությունը տրվեց, բայց նաև հրահանգվեց սպասել մինչև գարուն։ Առաջիկա կոտորածներն արդարեցնելու համար թուրքական իշխանությունները տարածեցին լուրեր, թե լեռներում ամրացած ֆիդայիները պատրաստվում են հարձակում գործել թուրքական զորքի վրա⁴։ Արդեն 1904 թ. հունվարի 30-ին Վանից հաղորդում էին. «Սասունը պաշարման դրության մեջ է։ Վանից ու Էրզրումից գունդ-գունդ այստեղ են դիմում. հրամայված է Երզնկայի զորաբանակին շարժվել դեպի Սասուն։ Եվ այդքանն էլ բավական չհամարելով՝ Բաղդադի 4-րդ զորաբանակից էլ մի գունդ պետք է գար։ Ի՞նչ են մտածում և ի՞նչի համար»։ Բայց մեկ շաբաթ անց, երբ ամեն ինչ աստիճանաբար պարզ է դառնում, թղթակիցը շարունակում է. «Նորանոր կոտորածի սարսափը տարածվում է ամենուրեք։ Ամեն կողմն էլ շշմեցան. «Գարնանը կոտորած կա»։ Թե ուստի՝ ծագած է այս շշուկը, շատ որոշ չէ»⁵։

Այս փաստերը կասկած չեն թողնում, որ ոչ թե Սասունն էր պատրաստվում ապրտամբել, ինչպես հայտարարում էին կառավարող շրջանները, այլ վերջիններս էին պատրաստվում բնաջնջել սասնահայությանը։ Կոտորածներից արձաքան ժողովուրդն ի վիճակի չէր ապստամբելու, մինչդեռ արյան հեղեղներում պարարտացած ոսոխը ձրգտում էր հագեցնել իր բացված ախորժակը մարդկային նոր զոհերով։ Բնական է, որ Սասունը պետք է դիմեր ինքնապաշտպանության։

Արդեն փետրվարի սկզբներին Մուշի շրջանում դրությունը խիստ լարվել էր, որովհետև հարկահավաքությունն ուղեկցվում էր բռնություններով և հալածանքներով։ Հուսահատության հասած Հունան գյուղի բնակիչներն ստիպված էին դիմադրություն ցույց տալ թուրքերին։ Կառավարության հրամանով 4-րդ բանակային կորպուսի զորամասերը սկսեցին մտնենալ Սասունին։ Փետրվարի 5-ի վաղ առավոտյան մահմեդական զինված ամբոխը կանոնավոր զորքերի ուղեկցությամբ ներխուժեց գյուղ։ Օրուք 120 տուն թալանվեց և կրակի մատնվեց։ Բնակչության մեծ մասը դաժանաբար սպանվեց։ Մարտի սկզբներին Մուշի շրջանի բոլոր հայկական գյուղերը զբաղեցված էին թուրքական զորքերով։ Հայ բնակչությունը զանգվածաբար փախչում էր դեպի Սասուն, որը նույնպես շրջապատել էին թուրքերն ու քրդերը։ Մարտի 31-ին սասունցիները կարողացան հետ շարժել թուրք-քրդական ուժերը՝ պատճառելով մեծ վնասներ։ Ապրիլի 10-ին Բիթլիսի վալին մի քանի հազարանոց կանոնավոր զորքի և քրդերի, ինչպես նաև Մուշի և Սասունի եպիսկոպոսների ուղղեկցությամբ եկավ Սասուն։ Չնայած հայ հոգևոր առաջնորդների ներկայությանը՝ Օենիկ գյուղը գրավվեց, ավերվեց և կրակի մատնվեց, որից հետո թշնամին շարժվեց դեպի Սեմալ գյուղը։ Բայց այստեղ սասունցիները Հրայրի գլխավորությամբ ուժեղ դիմադրություն ցույց տվեցին։

Ապրիլի 12-ին վալիի հրամանով Ս. Հովհաննես վանքի վանահայր Առաքել վարդապետը Մուշի և Բիթլիսի եպիսկոպոսների հետ միասին, իր հետ ունենալով նաև պատրիարք Օրմանյանի հպատակության կոչ անող նամակը, շարժվեց դեպի Սեմալ՝ նպատակ ունենալով բանակցությունների մեջ մտնել և հնազանդեցնել ապստամբներին։ Հանդիպման վայր որոշվեց Գեղաշեն գյուղը։ Սակայն, երբ սասունցիների առաջնորդները ապրիլի 13-ին թողեցին իրենց բարձունքները և շարժվեցին դեպի Գեղաշեն, վալին հրամայեց զորքերին հարձակվել նրանց վրա։ Հրայրն անմիջապես դատարկել տվեց Սեմալ և Դաշտակ գյուղերը, որոնք ենթարկվում էին ուժեղ հրետակոծության։ Հետապնդելով նահանջող ապստամբներին և բնակչությանը՝ թուրքերը Գեղեգուզան գյուղի մոտ հարձակվեցին նրանց վրա։ Ծավալվեց ուժեղ կոծի։ Թուրքերը, չկարողացելով կոտրել հայերի դիմադրությունը, նահանջում են՝ մարտի դաշտում թողնելով 136 սպանված։ Հայերի կողմից մարտի դաշտում ընկան 7 հոգի, այդ թվում նաև նրանց առաջնորդ Հրայրը։ Ապրիլ 14-ին թուրքերը կրկին հարձակվում են Գեղեգուզանի վրա։

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 169։

⁵ Ա. Ս. Համբարյան, *նշվ. աշխ.*, էջ 209։

Երկարատև հրետակոծությունից և հայերի համառ դիմադրությունը կտորելուց հետո նրանք գրավում են Գելիեզուզանը, որտեղ ապաստանել էր ավերված 45 գյուղերի ողջ մնացած բնակչությունը: Անդրանիկի զխավորությամբ ապստամբները և բնակչության մի մասը ճահանջում են դեպի Տալվորիկի բարձունքները: Նրանք, ովքեր ի վիճակի չեղան հետևելու նրանց, դաժանաբար սպանվեցին, գյուղը հիմնահատակ ավերվեց: Տալվորիկը, գյուղ, ուր ապաստանել էին հարակից 12 գյուղերի բնակիչները, ապրիլի սկզբներից գտնվում էր շրջափակման մեջ և համառ դիմադրում էր: Մայիսի 6-ին նոր ուժեր ստանալուց հետո թուրքերը կարողացան ջարդել հայերի դիմադրությունը և անլսելի դաժանությամբ կտորեցին ողջ մնացած բնակչությանը:

Սասունում և նրա շրջակայքում մայիսի կեսերին արդեն 45 գյուղ հիմնահատակ ավերվել էր: Բիթլիսի վալի, որը ղեկավարում էր Սասունում և նրա շրջակայքում տեղակայված թուրքական զորքերը և քրդերին, ամեն կերպ խոչընդոտում էր կտորածների հետաքննությանն ուղղված եվրոպական հյուպատոսների կողմից իրականացվող գործողությունները: Սպանվածների դիակները վալիի հրամանով կտոր-կտոր արվեցին և նետվեցին գետը: Դիարբեքիից եկող ճանապարհորդների վկայությամբ նրանք Տիգրիսի ափերին մարդկային մարմինների մեծ թվով մասեր էին տեսել: Սրանից հետո վալին վերադարձավ Մուշ, իր մոտ կանչեց հայկական գյուղերի ավազներին և ստիպեց նրանց ստորագրել սուլթանին ուղղված շնորհակալական նամակներ, որոնցում ավազները ստիպողաբար իրենց գոհունակությունն էին հայտնում սուլթանին՝ Սասունի ապստամբությունը ճնշելու համար:

Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի հյուպատոսները, շրջելով Բիթլիսի վիլայեթում, հաստատեցին, որ թուրքական զորքերն ու քրդերը սոսկալի գազանություններ են կատարել հայերի նկատմամբ՝ կտորելով մոտ հինգ հազար հոգու: Լեոնային Սասունում աղետից առաջ, ինչպես արդեն նշել էինք, 12 հազարից ավել բնակչություն կար: Նրանցից մոտ 2800-ը տարվել էր Մուշ, այդքան էլ պատսպարվել էր լեռներում: Մնացած 5-6 հազարը կտորվել էր: Հայերի նկատմամբ գործադրվող դաժան հաշվեհարդարները շարունակվում էին նաև Մշո դաշտում՝ չնայած եվրոպական հյուպատոսների ներկայությամբ: Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կողմից Մուշ ուղարկված փոխհյուպատոսներն իրենց զեկույցներում նշում էին, որ այլևս ավելորդ են համարում Մուշում իրենց ներկայությունը, քանի որ անգոր էին արգելելու հայերի նկատմամբ թուրքերի անգթությունները: Թուրքերը հերքում էին բոլոր մեղադրանքները: Առհասարակ Թուրքիայում գտնվող եվրոպացի պաշտոնյաներն այն կարծիքին էին, որ եվրոպական պետությունները նախքան Բարձր դռան դեմ դիվանագիտական արշավանք սկսելը պարտավոր էին որոշել, թե մինչև որ աստիճան պետք է առաջ տանեն այդ արշավանքը: Այլապես թուրքերը, հմտացած ձգձգման արվեստի մեջ, միշտ գիտեին ձգձգել ամեն մի գործ, մինչև որ եվրոպական դիվանագիտությունը կհոգներ ու կծանձրանար²:

Սասունի դեպքերը լայն արձագանք ստացան Ֆրանսիայում՝ վերածվելով հասարակական բողոքի բուռն ալիքի: Արդեն 1904 թ. փետրվարի սկզբներին, դրված Սասունից եկող ծանր լուրերից, ֆրանսիական խորհրդարանի մի քանի հայասեր անդամներ արտաքին գործերի նախարար Դելկասեի ուշադրությունը հրավիրեցին սպառնացող վտանգի վրա: Միաժամանակ «Հայ Հեղափոխական Դաշնակցության» Արևմտյան բյուրոն, հեռագրելով Դելկասեին դեպքերի մանրամասնությունները, խնդրում էր ազդու միջամտության նախաձեռնություն ստանձնել:

1904 թ. ապրիլի 7-10-ին Ֆրանսիայի Նիմ քաղաքում տեղի ունեցավ «Ֆրանսիական խաղաղության ընկերությունների» II կոնգրեսը՝ նվիրված հայկական և մակեդոնական հարցերին: Կոնգրեսի մասնակիցներն իրենց ելույթներում դատապարտեցին Բարձր դռան կողմից Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Սասունում, իրականացվող

¹ Տե՛ս Մ. Գ. Սեբեոս, նշվ. աշխ., էջ 171:

² Տե՛ս «Մուրճ», 1904, № 6, էջ 178:

³ Տե՛ս «Մուրճ», 1904, № 7, էջ 159:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 161:

գործողությունները՝ դիտելով դրանք որպես 1894-1895 թթ. կոտորածների կրկնություն: Այնուհետև կոնգրեսը, միանալով միջազգային խաղաղության կոնգրեսների որոշումներին, պահանջեց իր օգուտ Հայաստանի և Մակեդոնիայի հեղինակի պայմանագրի 61-րդ և 23-րդ հոդվածներով խոստացված ռեֆորմների իրագործումը:

1904 թ. մայիսի 9-ին ֆրանսիական առաջադեմ մտավորականության անկախացուցիչ Վիկտոր Բերարը հանդես եկավ մեղադրական ճառով, որի մեջ խարազանեց տերություններին, նախ և առաջ Ֆրանսիային և նրանց թողտվությունից օգտվող սուլթանին: Միաժամանակ Բերարը դրվատեց հայ ժողովրդի անկրուտ պայքարն իր գոյության և իրավունքների համար: «Հայերը չուզեցին նահատակվել, ինչպես 1894-ին, և առանց մի փորձ անելու իրենք իրենց պաշտպանելու և բողոքելու: Նրանք հերոսաբար կուլեցին մի ամբողջ ամիս, առանց հաղթանակ տանելու, որն անհնարին էր»¹⁰: Փարիզի «Քաղաքական գիտությունների վարժարանի» նշանավոր ուսուցչապետներից մեկը՝ Ա. Գառուլ Լյուս Բոլիոն, որը որոշակի ազդեցություն ուներ ֆրանսիական շրջաններում, Սասունի դեպքերի ողջ ընթացքում հանդես եկավ հայապաաստ բազմաթիվ ելույթներով: Դատապարտելով սուլթանական վարչակարգը՝ Բոլիոն ջերմորեն պաշտպանում էր սասունցիների հերոսական պայքարը¹¹:

Սասունի դեպքերը լայն քննարկումների առարկա դարձան հատկապես Ֆրանսիայի խորհրդարանում: Հայտնի հայասեր, ֆրանսիական խորհրդարանի անդամ Ֆրանսիս դը Պրեսանսեն, 1904 թ. մայիսի 26-ին արտաքին գործերի նախարար Դելկասեին ուղղված նամակում անկախացնելով Սասունում տիրող խառնակ վիճակը և այս կապակցությամբ Թիֆլիսից ու Բաքվից եկող տագնապալից հեռագրերը, պահանջում էր նշանակել օր. երբ ինքը կարող էր պաշտոնապես ուղղել իր հարցապնդումը կառավարությանը, թե նա ի՞նչ միջոցառումների պիտի դիմի «... վերջ դնելու այս չարագործություններին և թույլ չտալու կրկնությունն այն սուկայի ոճիրների, որոնք տեղի ունեցան տասը տարի առաջ»¹²: Արդեն մայիսի 29-ի նամակում տարակուսանք հայտնելով, որ իր նախորդ նամակին նախարարը դեռ չի պատասխանել, Պրեսանսեն գրում էր. «... Ստիպողական պահանջ կա, որպեսզի Ֆրանսիան պաշտոնապես և հրապարակայնորեն հայտարարի, որ ինքը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դադարեցնելու այդ ոճիրները և անել այն ամենը, որպեսզի չկրկնվեն 1895 թ. սուկայի աղետները»¹³:

Հունիսի 9-ին խորհրդարանում Պրեսանսեն իր հարցապնդումն ուղղեց կառավարությանը: Ներկայացնելով Սասունում տիրող իրավիճակը՝ Պրեսանսեն շարադրում է մի շարք փաստեր, որոնք, ըստ նրա, նոր զանգվածային կոտորածների սկիզբ էին: Իր ճառում նա նշում էր. «Պոլսում ասում էին, թե հեղափոխական մի շարժում է մղվում Մուշում և Սասունում: Փորձել էին հայ ազգի առաջնորդ, պատրիարք Օրմանյանին միջամբողջ տալ, որպեսզի, այսպես ասած հպատակեցնի իր հոտը սուլթանի կամքին: Միմիայն այդ հանգամանքը կարող էր արդեն սարսափեցնել մեզ, քանի որ հիշեցնում էր 1894 թ. ոճիրների նախանշանները»: Այնուհետև Պրեսանսեն, խորհրդարանի անկախացուցիչներին հանգամանակից անկախացնելով տարվա սկզբից Սասունում ծավալվող իրադարձությունները, ասում էր. «Մի՞թե մենք կարող ենք կրկին ընդունել այն պատրվակները, պատճառաբանություններն ու ստերը, որոնք դժբախտաբար, 1894 թվականին կարողացան կանգնեցնել, խորտակել եվրոպական և ֆրանսիական դիվանագիտության անհրաժեշտ գործողությունները»¹⁴: Ըստ նրա՝ թուրքերը գործում են արդեն ավանդական դարձած մեթոդով. երբ ուզում են վերսկսել հայ ազգի բնաջնջման գործը, պահանջում են ոչ միայն ընթացիկ տարվա, այլև նախկին տարիների տուրքերը: «Թուրքերը հանդգնություն ունենին Սասունի շրջանում. 1894 թվականի զոհերի հետնորդներից և ժառանգներից պահանջելու վճարումն այն տասանորդի, որ նրանք երկու-երեք անգամ

¹⁰ Մ. Վարանդյան, Հայ հեղափոխական դաշնակցության պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932, էջ 306:

¹¹ Տե՛ս Ս. Սապահ-Գոլյյան, Պատասխանատուները, Փրովիտենս, 1916, էջ 153:

¹² «Դրոշակ», 1904, № 4-5, էջ 60:

¹³ «Հնչակ», 1904, № 6, էջ 51:

¹⁴ «Դրոշակ», 1904, № 7, էջ 100:

վճարել էին այդ տարիներին, բայց ստացադեր չէին ստացել»։ Ավարտելով իր փայլուն ճանր՝ Պրեսանսեն առաջարկում էր, որ Ֆրանսիան Բելիցի պայմանագիրը ստորագրող առնվազն երկու մեծ տերությունների՝ Ռուսաստանի և Անգլիայի հետ անհրաժեշտ դիմումներ ներկայացնի Կ. Պոլսին և պաշտպանի այդ դիմումները նավերի ցույցով, ինչպես Ֆրանսիան կազմակերպեց 1901 թ.¹⁵ իր մասնավոր շահերի պաշտպանության նպատակով։ «Ես չեմ կարող ընդունել և ես չեմ ուզում ընդունել, թե Ֆրանսիան կարող է շարժման մեջ դնել իր նավատորմը, ծավալել ու նպատակին հասցնել իր կորովը միմիայն Տյուրքիների և Լորանդոների համար»¹⁶։

Ի պատասխան Պրեսանսեի հարցապնդմանը, Դելկասեն, ճանաչելով թուրքական կառավարությանը դեմ հայերի ապստամբելու իրավունքը, հայտարարեց, որ կոտորածների մասին լուրերը չափազանցված են, և որ մայիսի 31-ին Պոլսի ֆրանսիական դեսպանի կազմած տեղեկագրի համաձայն ոչ մի մահություն չկա ներկա անցքերի և 1894 թվականի ողբերգության միջև։ Նախարարի կարծիքով Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների հետ համատեղ հիմնականում հաջողվում է կարգ ու կանոն պահպանել Հայաստանում։ Մինչդեռ կարգ ու կանոն ասելով՝ Թուրքիան հասկանում էր կոտորած ու ավեր։ Հենց այդպես էլ նախորդ օրը շեշտել էր Աբդուլ Համիդը՝ ռուս դեսպանի հետ ունեցած տեսակցության ժամանակ¹⁶։ «Ես պետք է նշեմ, ասում է Դելկասեն, որ մեր դեսպանի տված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին, որոնք ստացվել են Լոնդոնում և Պետերբուրգում»¹⁷։ Նախարարը նշում էր, որ Ֆրանսիան արել և անում է այն ամենը, ինչ բխում է թե՛ միջազգային պարտավորություններից և թե՛ բարոյական նորմերից։ Ըստ նրա, դրա վառ օրինակներն են 1903 թվականի սեպտեմբերի 14-ին վաճում ֆրանսիական փոխխոյապատասխանության և 1904 թվականի հունվարի 23-ին Խարբերդում հյուպատոսության հաստատումը։ Այնուամենայնիվ, Դելկասեն հայտնում է, որ իրողությունները վրդովեցուցիչ են, որ թուրքական կառավարությունը իրավունք չունի ապստամբների դեմ արշավելու միջոցին հարձակվելու խաղաղ բնակչության վրա։ «Եթե չի կարելի մերժել Բարձր դռանը ճնշելու ապստամբությունը, ապա կարելի է իրավամբ մեղադրել նրան, որ չնայած բացահայտ պարտավորությունների նա շարունակում է պահպանել այնպիսի մի վարչակարգ, որի հանդեպ ապստամբությունը հանդիսանում է միակ միջոցը հուսահատված ազգաբնակչության համար»¹⁸։ Հարկ է նշել, որ նման համարձակ հայտարարությունն ի նպաստ Հայկական հարցի մինչ այդ միանգամայն խորթ էր դիվանագիտական աշխարհին և երբևիցէ չէր արվել նման բարձրաստիճան պաշտոնյայի կողմից։

1904 թ. հուլիսի 7-ին Փարիզի քաղաքային գլխավոր խորհրդի նիստում ընթացիկ հարցերի քննարկումից հետո Մուշում և Սասունում «Կարմիր սուլթանի» ոճրագործությունների դեմ բողոքելու համար ձայն խնդրեց խորհրդի անդամ պարոն Կոլլին։ Ներկայացնելով հայկական նահանգներում տիրող անելանելի դրությունը, շարունակվող սպանությունները, զանգվածային թալանն ու ավերածությունները՝ նա ասում էր. «Եվ դրա հետ միասին անվերջ խաբեություններ և կեղծ լուրեր, որոնք ամեն օր հրապարակ են զգվում եվրոպական մայրաքաղաքներում գտնվող օսմանյան դեսպանատների կողմից՝ հասարակական կարծիքը քնեցնելու նպատակով»։ Հնետորի ճառից հետո խորհուրդը միաձայն ընդունեց բանաձև, որով դատապարտեց Բարձր դռան վարած հայահալած քաղաքականությունը, և հանրապետական կառավարությանը կոչ էր արվում. «Հավատարիմ թույլերին պաշտպանելու իր պաճհությանը՝ Ֆրանսիան պարտավոր է անմիջապես ձեռք առնել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտորեն բխում են Հայաստանի արդի կացությունից, նպատակ ունենալով հնարավորին շուտ վերջ տալու այս

¹⁵ Ֆրանսիացի գործարարներ Տյուրքիին և Լորանդոն մեծ տոկոսներով փոխառություն էին տվել Թուրքիային, իսկ վերջինս ձգձգում էր դրանց վճարումը։ 1901թ. Ֆրանսիան նավերով ցույց կազմակերպեց Կ. Պոլսի դեմ պահանջելով վճարել այդ փոխառությունները (տե՛ս «Դրօշակ», 1904, No 9, էջ 133)։

¹⁶ Տե՛ս «Հնչակ», 1904, No 6, էջ 52։

¹⁷ «Դրօշակ», 1904, No 9, էջ 132։

¹⁸ Նույն տեղում, էջ 132։

հրեշափոր աղետին, որն անարգանք է ամբողջ մարդկությանը»¹⁹:

Սասունի դեպքերը լայնորեն լուսաբանվում և քննարկվում էին ֆրանսիական պարբերական մամուլում:

«Темпс» լրագիրը «Հայերը Թուրքիայում» վերնագրով հողվածում գրում էր. «Թուրքական կառավարությունը որոշել է լեռնային տեղերում ապրող հայերին տեղափոխել դաշտի վրա: Կառավարությունը գտնում է, որ դա միակ միջոցն է թուրք ժողովրդին ապահովելու հայերի «հարձակումներից», որոնք հետո թաքնվում են սարերում և անտառներում: Հայերը բոլոր միջոցներով դիմադրում են այդ ծրագրին, հասկանալով, որ դրա իրագործումը կձգի իրենց ամբողջովին քրդերի ձեռքը»²⁰:

«Humanite» թերթն իր դժգոհությունն է հայտնում, որ Անգլիան 1878 թ. խանգարեց Ռուսաստանին իրագործել Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, այժմ էլ բավականաչափ եռանդ ցույց չի տալիս աջակցելու Ֆրանսիային և Ռուսաստանին վերջ դնելու այն եղկելի վիճակին, որի մեջ գտնվում են Թուրքիայի քրիստոնյաները: «Անգլիական կառավարությունը,- գրում էր թերթը,- այլևս չի կարող արդարանալ, թե ոչինչ չգիտի Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Մայիսի 19-ին Համայնքների ժողովում կոմս Պերսիի պատասխանը Ջեյմս Բրայսի հարցապահմանը, ենթադրել է տալիս, որ արտաքին գործերի նախարարը, վախենալով դիտել ճշմարտությունն իր բոլոր սարսափներով, հետամուտ է ուրանալու եղելությունների ծանրակշռությունը»²¹:

Ֆրանսիայում հասարակական բողոքի լայն ալիքը և հատկապես խորհրդարանում Պրեսանսեի գլխավորությամբ հայասեր պատգամավորների նպատակասլաց հարցադրումներն արտաքին գործերի նախարարին կարծես թե ստիպեցին պաշտոնական Փարիզին որոշակի քայլերի դիմելու: Կ. Պոլսից հուլիսի 14-ին ստացված հեռագրում հայտնվում է հետևյալը. «Ֆրանսիական կառավարության նախաձեռնությամբ Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի դեսպանները ռեֆորմների մի ծրագիր կազմեցին Անատոլիայի այն վիլայեթների համար, որոնք բնակեցված են հայերով: Ծրագիրը հանձնվեց Բարձր դռանը՝ ռուս դեսպանի միջոցով»²²:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հանձնարարությամբ ամերիկահայոց թեմական առաջնորդ Հովսեփ Սարաճյանի և Պարսկաստանի ու Հնդկաստանի թեմական առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Այվատյանի գլխավորած պատվիրակությունը, մեկնելով Եվրոպա, հուլիսի 16-ին Ֆրանսիայում ընդունվեց հանրապետության նախագահ Լյուբեի կողմից: Նախագահի հետ հանդիպման ժամանակ նրանք, հանգամայինց ներկայացնելով Սասունում և Մուշում տեղի ունեցած կոտորածները և շարունակվող անելանելի դրությունը, կոչ արեցին նրան՝ Բարձր դռանից պահանջելու 1878 թ. Բեռլինի պայմանագրով ամրագրված բարեփոխումների իրագործումը հայկական նահանգներում: Ի պատասխան՝ նախագահը հայտնեց, թե Ֆրանսիան համակրանքով է վերաբերվում հայերի պահանջներին, միաժամանակ նշելով, որ իր երկիրը մեծակ չի ստորագրել Բեռլինի պայմանագիրը: Այս պատվիրակությանը չի հաջողվել դրական արդյունքների հասնել և ենթարկվել է հայկական մամուլի ծաղրուծանակին:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ հայասիրական դրսևորումները Ֆրանսիայում Սասունի դեպքերի ընթացքում երկու ուղղություն ստացան՝ հասարակական և պետական:

Առաջին ուղղության ներկայացուցիչները իրենց համակրանքն ու պաշտպանությունը հայտնեցին հայ ազատամարտիկներին: Դատապարտելով օսմանյան կառավարության հայախալած քաղաքականությունը՝ նրանք պահանջում էին ֆրանսիական կառավարությունից սասանախայության կոտորածներին վերջ տալու համապատասխան միջոցառումներ ձեռնարկել: Բայց նրանք չկարողացան կառավարության վրա ազդող լծակներ ստեղծել:

¹⁹ «Դրոշակ», 1904, No 7, էջ 102:

²⁰ «Մշակ», 1904, No 108, էջ 2:

²¹ «Մշակ», 1904, No 112, էջ 3:

²² «Դրոշակ», 1904, No 7, էջ 102:

Երկրորդ ուղղության ներկայացուցիչները, ի դեմս ֆրանսիական դիվանագիտության, գործնականում մնացին անտարբեր: Անտարբեր մնացին այն ժամանակ, երբ Սասունի լեռներում փոքրաթիվ հայ ազատամարտիկներն օրհասական կոիվ էին մղում թուրքական կանոնավոր զորքերի դեմ, երբ Մուշում և Բիթլիսում շարունակում էին կոտորել խաղաղ հայ բնակչությանը, երբ Պոլսում, Վանում, Կարհնում, Տրապիզոնում և այլ վայրերում հայերին զանգվածաբար ենթարկում էին սադրանքների և ձերբակալում: Ունեցա՞ն որևէ դրական արդյունք պաշտոնական Փարիզի «հայասիրական» արտահայտությունները: Պատասխանը միանշանակ է՝ ո՛չ: Ֆրանսիան չխանգարեց սուլթանին Սասունի կոտորածների օրերին: Սակայն հասարակությանը խաբելու համար կառավարությունը հայտարարեց, թե Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կառավարություններն արդեն ցուցում են տվել Կ. Պոլսի իրենց դեսպաններին «օգնել անմեղ զոհերին»²¹: Զբաղված լինելով իր ներքին գործերով՝ մասնավորապես՝ կղերականության դեմ մղվող պայքարով, Ֆրանսիան կարծես թե լրիվ մոռացել էր մի քանի ամիս առաջ իր բարձրաստիճան պաշտոնյաների արտասանած ճառերն ու խոստումները՝ Մակեդոնիայի և Թուրքիայի ասիական նահանգներում քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Ֆրանսիայի վարչապետ, արմատական Կոմբն այդ տեսակետից ոչնչով չէր տարբերվում իր չափավոր հանրապետական նախորդ Վալդեկ-Ռուսոյից: Արդարացի էին գերմանական „Berliner Tageblatt” թերթի հոդվածի տողերը. «Դատելով նախընթաց տարիների փորձից, եվրոպական դիվանագիտությունը որոշել է հայերին թողնել ճակատագրի հույսին: Եթե Հայաստանում կատարված խժոժությունների 1/100 մասը կատարվեր մի երկրում, ուր գոյություն ունեն եվրոպական շահեր, վաղուց ամեն բան կարգի բերված կլիներ, իսկ այնտեղ, ուր չկան եվրոպական շահեր, դիվանագիտության խիղճը շատ առաձգական է»²²:

А. С. ХАЧАТРЯН - Проармянские реакции Франции на Сасунское восстание. - В статье освещается Сасунское восстание 1904 г. и отношение передовой общественности Франции к нему. Сасунские события нашли во Франции широкий отклик, вылившийся в мощную волну общественного протеста. Политические и общественные деятели Франции, представители науки и культуры осудили в своих выступлениях, докладах и статьях политику османского правительства, направленную на угнетение армян. Официальный Париж также выступил с проармянскими высказываниями, которые однако практических результатов не имели.

²¹ Մ. Վարանդյան, ՀՀԴՊ, Բ. Ա., էջ 314:

²² «Մուրե», 1904, № 8, էջ 149: